

մալթա, եւ լաիլաճ մնացեալ գառօնթան անդ պահեցաք ԼԼ օր, եւ ապա ելաք ի քաղաքն, եւ վասն անյաջողութեան հողմոյն Բ ամիս ուկէս մնացի ի մալթայ. մտա ֆռանսղի նաւ մի գնալ ի փօլի, մէկ օր եւ մին գիշեր գնաց հողմն ընդդէմ դարձոյց նաւն. կրկին ելաք ի մալթա, եւ անտի եւս ելաք եւ մտաք փափաի պէկլիկ նաւն, եւ սա նաւեաց Գ օր եւ Գ գիշեր հողմն կարի սաստիկ, սա եւս դարձաւ յետս. եւ կրկին ելաք ի մալթա. զինի քանի աւուրց փափաի նաւաւն ելաք ի ճանապարհ, մինչեւ ի ԺԲ օրն հասաք ի չիւիտէվէզէ փափի քաղաքն, եւ անտի ելեալ Բ օրն հասաք ի հռօմ որ յայժմ եմ ի Մարեմ եգիպտացոյ եկեղեցին, եւ որպէս արդէն լուաք յայժմ այնպէս ոչ տեսաք. Աստուած ազատ պահէ զմեզ ի գայթաղութենէ. մէկ քանի փող ունէաք մնաց ի մեծն փողիս եւ մինչեւ ցաժմ ամենեւիմք գիր ոչ ընկալաք, դեռ եւս սրբազան պապին կէօրիւշմիշ չեղաք. 80 ըսկութ պարտք աւարի, փողն մեր մնաց անդ եւ մեք աստ մնացաք խղճալի: Աստուած ինքն հոգացէ յօրե յօրմէ ելաք ի մեծէն պօլսոյ մինչեւ ցայժմ ամենեւին մխիթարութիւն իմն ոչ տեսաք Աստուած զվախճանն մեր ի բարին եղերեսցէ առանց տրտնջման եւ գայթակղութեան. եղանակն քաղաքիս եւս է աւեր, բնութիւնն մեր տկար, եւ զինչ առնելս ոչ գիտեմ, ամենից կողմանց շուարեալ կեամ: Աստուած ամենակալ ի թիկունս հասեալ օգնեսցէ մեզ, եւ տեղի իմն պատրաստեալ աստ՝ խաղաղութեամբ եղերեցից զկեանն մեր, որ ի յարեւելս դառնալն ինձ անկարելի է, լաւ է ինձ սովամահ մեռանիլն աստ ի կողմանս՝ քան դառնալ յետս. որ է մահ մահու, եւ խայթ դժոխոց եւ այլն, եթէ կամիս գրոյս հասանիլն գերապայծառութեանդ փուսլայիւ մի ծանոյ անբախտիս, եւ թէ ոչ այլ այն կամք քո եւ բաւէ ողջոյն քո ընդ գրիւն հայր Գրիգորին ընկալայ մեծաւ սիրով: